

# Երաժշտութեան մասին երկու հատուածներ

## Նախնեաց մատենագրութենէն



Վերջերս հին ձեռագրաց հաւաքածուիս մէջ մեկնողական ձեռագիր մը գտայ, որ կը պարունակէ հետեւեալ երկու շահեկան գրութիւնները: Մեր հին մատենագրութիւնը բաւական ժլատ է նմանօրինակ գրութեանց մասին: Չեմ կարծեր որ այլուր հրատարակուած ըլլան այս երկու հատուածները, որ արժանի են ուշադրութեան: «Անահիտ»ի նոր շրջանի մէկէ աւելի թիւերուն մէջ երեւցան հայ երաժշտութեան վերաբերեալ հմտալից յօդուածներ, երբեմն՝ օտարներու երկասիրութիւն: Կը յուսամ ուրեմն, որ այս հրատարակութիւնը ուշադրութեան պիտի արժանանայ ու թերեւս օգտակար ըլլայ մեր հին երաժշտութեամբ զրազողներուն:

ՄՈՎՍԵՍԻ ՔԵՐԹՈՂԱՀԱՒՐՆ :

ՅԱՂԱԳՍ ԿԱՐԳԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ :

ԲԱՅԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՔ :

Շարադրութիւն չարամանու հոգեւոր երգարանիս: Ըստ երաժշտական չափուց: չտամբարձայնութիւնք. ստեղնաչափութեան. ութամասնեայ պատկանուոր ձայնից պատճառք: Եւ արդ քանդի նախկին հնչեաց բարբառն աստուածային թէ ո՞ւր եւ աղամ: Եւ երկրորդ թէ ո՞ւր է արէլ եղբայր քո: Արդ այս ամենայն ձայնքս հարադատք են առաջի ձայնին: որոց սրբոց սրովքից հնչումն յերկրիս երկրորդ յաւրինեցան փառարանութեան երգին: Քանզի

յառաջին փառաւորչացն յառաջին հրաչափառական ձայնիւ հնչեաց բարբառն յասելն եթէ փառք ի բարձունս աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն: Իսկ կողմն նորին. զողոթական մաղթանս ունի: եւ զերկրաձգական աղաւթսն երգ մովսիսեան. յերկրորդումն խորանին վկայութեան: Ըստ որում համաձայնի աւրհներգութիւն մարիամայ քեռն ահարովնի. յերգելն ի կարմիր ծովուն թէ աւրհներցուք զտէր զի փառաք է փառաւորեալ: Իսկ երկրորդ ձայն. զխմբական աղաչութիւն ունի զառ ի վրտակաց ապրեցելոցն. եւ բրոցախմբելոցն զերախաղաց երից մանկացն զաւրհներգութեան երգ ի մէջ հնոցին. յաղապս երկուց փրկութեան. մարմնոյ ասեմ եւ հոգւոյ: որպէս ասի յերկրորդ ձայնիւ երգել յերկրորդ ժամու աւուրն: Ի կողմն նորին ողբերգական ձայն: սովաւ յաւրինեցան. սաղմոսք ի սուրբ պահսն քառասնորդացն: եւ քրիստոսի չարչարանաց աւուրն: Ըստ երկրորդի զղջման ապաշխարողաց: զառաջին բարէզարգութիւն ոչ ունելով: Իսկ երրորդ ձայն. զիզական աղաչութիւնսն ունի: սաւալ(=սովաւ) յաւրինեցան քարոզք տունջեան եւ ի զիշերոյ: Ըստ առ ի յերրորդական տեւողութեան էն (1): Ըստ երից ժամանակաւ պիտոից: Ըստ մարմնոյ. շնչոյ, եւ հոգւոյ: Իսկ կողմնին(2) բերկրալից ձայն: որով

(1) Հաւանօրէն՝ տեւողութենէն:

(2) Թերեւս՝ կողմն նորին:



վառ իսկ կոչի: այսինքն է, խիստ ձայն: սաւալ  
յաւրինեցան սաղմոսք աւուրն արմաւենեաց ի  
մտանելն յիսուսի յերուսաղէմ որոց համաձայնի  
եւ աւրհներգութիւն տղա՛ոցն յասելն: թէ աւրհ-  
նեալ եկեալ անուամբ տեառն: Իսկ չորրորդ  
ձայն: ընդհանուր դքարողութիւն յայտնէ: Ըստ  
չորս անգիւնքս աշխարհի: Ըստ չորից ժողո-  
վոցն. եւ ըստ չորից բաղացութեան մարդոյս:  
Իսկ կողմն նորին ուրախալից ձայն: սաւալ չա-  
րազրեցան ստողո՛ղիական սաղմոսքն. ի սուրբ  
պասեքին ի յարութեան քրիստոսի: ի մի պա-  
րունակութիւն երկնայնոցն եւ երկրաւորացս  
ըստ առաջին բաղկացութեան:

Արդ աստուած աննշանուն. արարչանասի(1):  
եւ տէր դատողական: որ զիմանալի աշխարհն  
բաղկացոյց տասն թուովք աւրհնարանիչս իւր  
կարապետել յիմանալի խորանին: որոց մինն  
ստոր անգեալ, յաւրհներոյն դաստուած անար-  
ժան դաւա: Իսկ ինն դասուցն ի հոգւոյն սրբոյ  
անդադարական ի փառաբանութեան իւրոց ա-  
րարչին: զոր ի նմին հոգւոյ ուսեալ մարգա-  
րէիցն. ուսուցին եւ ծանուցին որդւոց մարգ-  
կան զերաժշտական զերգս աւրհնութեան: Իսկ  
սգալի (2) աշխարհս տասն աստիճանաւ պա-  
տուեալ: զոր ի զանազան ժամանակս ուսոյց հո-  
գին սուրբ: տասնադեաւ սաղմոսարանաւ սաղ-  
մոս ասել տեառն: Իսկ յապառնիս ժամանակին:  
յառաջի ձայնիւն հնչեցեալ լինի փողն դարբի-  
էլեան: եւ զերեզմանքն բանան. եւ մեռեալքն  
յառնեն: Երկրորդ ձայնիւ լսի բարբառ եթէ փե-  
սայ դա՛յ արիք ընդ առաջ նորա: Երրորդ ձայ-  
նիւ մարգարէքն վառին որպէս սպառազէնս ա-  
ռաջի նորա: եւ կողմն արդարոցն վերա՛բերի  
հանապաղ ընդ տեառն լինելով: Զորրորդ ձայ-  
նիւ կարգի ատեան դատաստանին, եւ նստի դա-  
տաւորն յաթոն դատել զաշխարհս արդարու-  
թեամբ: Ի կողմն առաջի լալումն եւ կոծումն  
մեղաւորացն ի դժոխս: Իսկ երկրորդ կողմն  
զետ հրոյ յորեալ(3) ելանէ առաջի նորա: Իսկ եր-  
րորդ ի կողմն նովաւ լսին բարբառք զիմադա՛ր-

ձայն եւ անհաւատիցն: եթէ երթայք անիծեա(1)-  
քդ ի հուրն յաւիտենից զոր պատրաստեալ է սա-  
տանայի եւ հրեշտակաց նորա: Իսկ չորրորդ կողմն  
ուրախալից ձայն. նովաւ կոչին արդարքն. եթէ  
եկայք աւրհնեալք հաւր իմոյ ժառանգեցէք զար-  
քա՛(յ)ութիւնն պատրաստ(ե)ալ ձեզ ի սկզբանէ  
աշխարհին (1): Իսկ երկրորդ ի ստեղն, զոր  
դտեալ հրոյն ճարակ եւ կերակուր իւր առնէ  
զամենեան: Իսկ վերջին ստեղն պատրաստէ  
սիրելաց (2) իւրոց բաժակ փրկութեան եւ ան-  
մահութեան յարքա՛ութեան երկնից: Այս է  
պատճառք ձայնից երաժշտականաց: Եւ եթէ  
ընդէր ութ կանոնիւք կարգեալ զսաղմոսն դաւ-  
թի. որով հանապաղ կատարեմք զպաշտամունս  
եկեղեցւոյ: Ինձ այսպէս թուի եթէ եւթն կանոն  
ըստ եւթն դարուն: Իսկ ութն ըստ ութերորդ  
դարուն կարգեալ: զոր եւ իմաստունն սողովմոն  
խոգունութեան (3) խրատուն տարացոյց տայ  
յասելն. եթէ տուր բաժինս եւթանց. այլ եւ  
ութից: Եւ դարձեալ ի սաղմոսն դաւթի յասելն.  
եթէ սաղմոս վասն ութերորդին: Արդ որպէս  
վերադոյն ասացաք, եթէ եւթն կանոնն. յա-  
ղազս եւթն դարուն: Իսկ ութներորդն. զութե-  
րորդ դարուն խորհուրդն բերէ յինքեան, զոր  
եւ ի դարձի զերութեան նկարագ(ր)եալ է ի բա-  
բելովնէ յերուսաղէմ: Իսկ ըստ իմանալի տե-  
սութեան, յերկրէ յերկինս, եւ յերկիր աւետ-  
եաց նախաշաւիղ ի վերելք: Վասնզի աւրինակ  
էր նոցայն մերոյս: Երուսաղէմ. դրախտին.  
նարուքաւդաւնոսոր սատանայի: բարեւալքին  
դիւաց: Երեք մանկունքն մարդկային բնու-  
թեանս: հնոց հրոյն. հանդերձեալ հրոյն: Իսկ  
զերգս երից մանկանցն. հանապաղ առաւա-  
տուն երգել յեկեղեցւոյն: զի որպէս նոքա դեր-  
եալք ի բարեւոյնական բռնաւորէն ի հնոցն ան-  
կանէին: նոյնպէս եւ մեք ի հնոցի կենցաղոյս  
զերեալք յաներեւոյթ բռնաւորէն: եւ ըմպո-  
նեալք պէս պէս ախտիւք եւ լուցկիք եղեալ յա-  
ւիտենական հրոյն: Աստանաւր զողցես իմն  
հրեշտակական աղղմամբ: ի ի թառամեցուցա-

(1) Հաւանօրէն՝ անեղ անուն արարչական ասի:

(2) Այսինքն՝ զգալի:

(3) Այսինքն՝ յորդեալ:

(1) Այսինքն՝ աշխարհին:

(2) Այսինքն՝ սիրելեաց իւրոց:

(3) Այսինքն՝ ի զգոնութեան:



նող քնոյն զարթուցեալք: աւուր աւուր. ընդ առաւօտսն զերգս երկց մանկանցն ի բերան առեալ ասեմք. եթէ աւրհնեալ ես տէր աստուած հարցն մերոց. աւրհնեալ եւ փառաւորեալ առնուն քո յաւիտեան: եւ որպէս նոքա ի փրկութիւն անձանց իւրոց առ իւրոց փրկչին մատուցեալ, եւ որպէս առ երկինս ի հնոցէն ի վեր գոչէին յորդորելով զամենայն արարածս ի փառաբանութիւն աստուծոյ: ըստ նմին աւրինակի եւ մեք իբրեւ անդամք ի մարմնոյ նորայ եւ ոսկերաց նորայ ի վերայ մեր եւ մեզ բերելով զզլուխն վերայ գոչել աղաղակեմք յընդհանուր տեսակս արարածոց: Թէ աւրհնեցէք ամենայն գործըք տեսուն ըզտէր: իբր զի աղատեալք ի մեղացն. եւ աղատութեանն մեր հաղորդք լեալք ամենայն բնութիւնք արարածոց: հարկաւորին ամենայն իրաւք. եւ նոքա ընդ մեզ աւրհնեն եւ փառաւորեն զաստուած զայն որ աղատէն զամենեւին: բայց պարտ է նախկին ապաշխարութեամբ ի մեղացն արդարանալ. եւ ապա հրաման տալ ի փառաբանութիւն աստուծոյ: նախ ասել թէ մեղաք անաւրինեցաք յանցեաք. եւ ապայ համարձակել եւ ասել: Թէ աւրհնեցէք զամենայն գործք տեսուն զտէր: նախկին ասել թէ ողորմեա՛ ինձ աստուած ըստ մեծի ողորմութեան քում ըստ բազում զթութեան քում քաւեա՛ զանաւրէնութիւնս իմ: առաւել լուա՛ զիս յանաւրէնութենէ իմմէ եւ ի մեղաց իմոց սուրբ արա՛ զիս ապա՛ համարձակել եւ ասել: Աւրհնեցէք զտէր յերկնից աւրհնեցէք զնա՛ ի բարձանց: Աւրհնեցէք զտէր հրեշտակք նորա. աւրհնեցէք զտէր ամենայն զաւրութիւնք նորա: եւ յետ այնորիկ բարձրանալ քան զսպալի արարածս յիմանալի բնութիւնս: եւ ընդ անմարմնոցն զասուց գոչել. եթէ փառք ի բարձունս աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն եւ այնպէս միաբանել ընդ վերնոցն զեղեցիկ հակառակութեամբ: Նախ զսերովրէից զհնչումն երգեն զերեքին զսրբասացութիւն: եւ ապա՛ զմանկունս եկ(ե)ղ(ե)ցւո՛ յորդորեն համա՛ձայնել ընդ անմարմնական բնութիւնսն. յասելն թէ յարեւելից մինչեւ ի մուտս արեւու աւրհնեցէք զանուն տեսուն: որ զթացաւ առ աղատ եւ տառապել(1) բնութիւնս: յարուցանելով յերկրէ

(1) Թեւեա՛ որ գրացաւ առ աղֆատ եւ տառապեալ բնութիւնս:

եւ ի մեղաց: բնակեցուցանելով ի բարձունս յանմարմնական բնութիւնսն փառաբանիչս ա՛մենա՛սուրբ երրորդութեան. նմա՛ փառք յաւիտեանս ամմէն: Ողորմեա տէր մեր:

— 00 —

Առաջարան Կցորդարանի: Խաւսփ տեսուն բարսեղի: Յաղագս ձայնից երգոց քէ ուստի կամ յումէ գտաւ: Զոր քարգմանեաց: Ստեփանոս փիլիսոփոս: Եղեալ երաժիշտ եւ խելամուտ ամենայն ձայնից կենդանեաց:

Ստեփանոս երգիչ եւ փիլիսոփոս բաժանեաց իմաստունս. իղ (=26). որք էին այսոքիկ: բառաչել. պոռոչել. պապչել. բչել. մնչել. կոռոչել. գոչել. մոռնչել. տնչել. բբչել. մոմոալ. ճնչել. կանչել. գոգոհալ. վրվնջել. գոռոչել. հաճել. հնչել. կառաչել. հինչել. կաղկանձել. վակել. ոռնալ. կարկաչել. սողալ. սրուել: եւ որ սոցին ձայնիցս է գործին: զուգաթիւս արարեալ առ մի մի ձայնս: երգէին սոքա զվերացեալ ձայնսն: Արդ յետ սորա. թիմզիանոս. թեաքացի լեալ երաժիշտ առ մի գործարան զամենայն հաւաքեալ զձայնսն ի մի աղի. զմի աղիձայնն (\*) բաժանեաց մինչեւ քարանց անգամ սգալ (2) զխողտիւն ձայնիցն եւ ամենայն կենդանեաց:

Յետ սորա եւ թեովսէ երաժիշտ լեալ. այլակերպ ի նոցանէ յարմարէր նուազարան եւ հարկանէր նովաւ զամենայն ձայնս կենդանեաց: Ապա սիներգես երգիչ լեալ եւ ուսեալ զնոցայն. եւ ի հիւանականէ գտեալ զառաջին ձայն: Ապա՛ փոկեղիղէս եղբայր նորին երաժիշտ. եղիտ. զգիտութիւնսն. ի դարբնէ որ է երկրորդ ձայն: Ապա՛ սոփեկղիտէս եղբայր սոցին. երաժիշտ. գտրիպովն. որ է երրորդ ձայնի յորձանաց զետոց: Ապա՛ պիպիանոս քեռորդի սոցին գտեալ ի հոսամաց (1) ծովային ալեաց զեմառտոնն որ է՛ չորրորդ ձայն:

(\*) Աղի կամ աղիձայն հոս գործածուած է լար կամ լարաձայնի իմաստով. լարերը շինուած ըլլալով ոլորուած աղիքէ:

(2) Այսինքն զգալ:

(1) Այսինքն՝ ի հոսամաց:



կողմանականք նոցին: (1)

Ապա քիւնոսսինէս. զատուցանէ զպղա՛խմին ի պոատոյ. որ է կողմանակ առաջին ձայնի: Ապա՛ եկեալ արքեղէս երաժիշտ. եզիտ սա՛ զպղափողորոյն ի պոիդու. որ է ապականութիւն առաջին ձայնի. եւ զատուցեալ զպոիդոն. խտեւտեալ (2) որ կոչի կքղեւառ. այսինքն որ կոչի կողմանակ երկրորդ ձայնի: Եւ ընդ սմա՛ արխատարքոս. եւ պինդառ: Թեսրացիքն զտին. զպափառովն. իղեոխտու(3) որ է ապակա նութիւն երկրորդի: զտին զվառ. ինասխորովն (4) որ կոչի ծանր. այսինքն կողմանակ երրորդին: Ապա՛ եւ նոմոս երաժիշտ եզիտ զպղա՛խս. խտառու (5). որ է կողմանակ չորրորդին եւ միւս եւս այլ ձայն զտեալ որ ասի Հինդերորդ: Բայց արքեղոս երաժիշտ. եզիտ զամենայն ձայնից մաքրութիւնս որոշարար ըստ աշտիճանաց ինքեանց: Քանզի ասեն զնմանէ. եթէ ոչ միայն ի քերովնեն վարժէ զարուեստն. այլ եւ ծովայնոցն ուսեալ: վասն որո՞ կող պատեմք (6) զլսելիս. զի մի լուիցէ զայլ քաղցրութիւն ձայնից եւ այլ բաղում ինչ ասեն զնմանէն զոր ոչ պարտ է երկրորդել: Արդ ի վերայ այսոցիկ հաւատամք թէ ոփելեան եղանիլ զործոց երաժշտականաց. զորս ի ձայնից ստեղանց ուսան առաջինքն: Արդ յամենից զասս եւ ի յարմարումն բանիցս զմինն աւրհնել եւ փառաւորել զաստուած: եւ առ այս ամէն ասէ մարգարէն. սաղմոս ասացէք աստուծոյ մերոյ. սաղմոս ասացէք թաղաւորին մերոյ սաղմոս ասացէք: Եւ զարձեալ թէ երգեցէք տեառն. երգեցէք անուան նորա եւ հրամանիս այս բաղումք հաւատացին եւ հետեւեցին: ոմանք երգեն առանց զործոյ (7) ոմանք զործովք: ասափ. եւ եթամ. ծնծղաբւք վերա՛դոչէին: Զաբարիաս. եւ ողողիաս. եւ սիմիա: եւ եղիաս:

եւ մովսէս. եւ թիդով. տողովն (1) երգէին: Մաթեաս. եւ բանեաս. եւ մանի՛ան. եւ արիդու. եւ ողիաս. եւ որդիքն կո՛րխա՛. քնարով երգէին: անանիաս. եւ եղիազար փողով երգէին: Արդ ասացից եւ զայս. լինի սաղմոսաբանն զործի աւրհնութեան: եւ լուեալ կա՛ առանց ձայնից: եւ երգ ասի սա՛. յարաժամ առանց զործեաց է. Գո՛չէ ասաւդն: Իսկ սաղմոսերգուն. նախ երգարանաւ եւ ապա՛ զոչէ զործեաւն:

Արդ պարտի մեղիտովն. այսինքն ձայնագրողն վարժեալ զերաժշտականութեան ամենայնի զեղեցկապէս. զի զարդարեսցէ զմեղիտէսն: եւ զամենայն ձայնադրեալսն: զի յորժամ հեղցի բանն ի բեռիկոսէն որ է բանաստեղծ. եւ մարակարծիցի ի հոետորէն որ է ճարտասան: զարդարեսցէ զմեղ ետտիկովն: ձայնագրելով. տրոպով. եւ եղանակովք. քաղցրութեամբ երգողին զեղմամբ: արդ մարդկանց առադաստին ոչ վա՛ել է զործարան երգոց որպէս ի հնումն: այլ եղիցի կոկորդն փոխանակ փողոյն: ունչան. փոխանակ սրնկի: կզակն ծընծա՛լից: լեզուն. տնտրկոցի: բոլոր մարմինն. թմբուկ. միտքն. տաւիղ. հողին քնար: սղայարանքն. սաղմոսարան: զի զբեալ է թէ մարդն է զործի աւրհնութիւն (2):

\*\*\*

Այս հատուածներուն արտագրութիւնը կատարած եմ նոյնութեամբ առանց որ եւ է ճշգրտմի, նոյնիսկ կէտադրութիւնը հաւատարմօրէն օրինակելով:

Զեռագիրը որմէ արտագրեցի, ինչպէս ըսի, իմ սեփական հաւաքածոյիս մաս կը կազմէ: Գրուած է Յովհաննէս Դ. Անթէպցի Կիլիկիոյ կաթողիկոսին համար, 1605ին Ատանայի Սր. Աստուածածին եկեղեցին, զրիչ Գրիգոր Երէց կամ քահանայ: Գիրը բոլորգիր, տեղական կոչտ թուղթի վրայ գրուած: Պարունակութիւնը՝ մեկնողական գրութիւններ, որոնք կարեւոր հատուածներ ունին:

Վերի հատուածին մէջ նշանադրուած են աշխարհ, ընդ եւ երբեմն ըստ: Սղադրուած են

(1) Հաւանօրէն՝ կողմանականից նոցին:

(2) Հաւանօրէն՝ ի տետետու:

(3) Հաւանօրէն՝ ի դեռիտու:

(4) Թերեւս՝ ի նասխորովն:

(5) Թերեւս՝ ի տատու:

(6) Հաւանօրէն՝ կողպատեմք:

(7) Այսինքն՝ առանց գործւոյ (առանց նուագարանի):

(1) Այսինքն՝ տաւղովն:

(2) Ուղիղն է՝ գործի օրինութեան:



աւրհնեալ (ա''հնեալ), երկրորդ, երրորդ, չոր-  
րորդ (երր''դ, երր''դ, չոր''դ), ամենայն (ա''ն)  
եւ բազմաթիւ ուրիշ սովորական սղագրեալ բա-  
ռեր: (\*)

Ուիչիքա

Յ. ՔԻՐՈՏԵԱՆ

(\*) Մեր աշխատակից Յ. Քիրտեանի գտած  
այս երկու հին գրութիւնները արդարեւ մեծա-  
պէս շահեկան են եւ հաւանօրէն՝ անտիպ: Առա-  
ջին հատուածը մեր Շարականին երաժշտական  
յօրինուածքին աստուածաբանական, արուես-  
տագիտական եւ պատմաբանական մեկնութիւնն  
է, բաւական խորհրդաւոր ու խրթին ոճով շա-  
րադրուած, որ կրնայ մեր հին եկեղեցական

երաժշտութեան պատմութեամբ զբաղող մաս-  
նագէտներուն ուսումնասիրութեան նիւթ հայ-  
թայթել: Այս գրութիւնը, որ վերագրուած է  
Մովսէս « քերթողահօր », հորեմացոյն բազ-  
մալար, հմտալից ու գեղասէր մտփն կարեւոր  
արտադրութիւններէն մին կը թուի, ու անոր  
նոյս գործին կ'աւելցնէ արժէքաւոր նոր էջ մը:  
Պ. Քիրտեան պահպանած է օրինակչին կէտա-  
դրութիւնը, որ քմահան է ու անկանոն, բայց  
գոր իրագեկ ընթերցողը կրնայ ուղղել: Պ.  
Քիրտեան պահպանած է նաեւ օրինակչին ուղ-  
ղագրական սխալները եւ աղաւաղեալ բառերը:  
Այս վերջիններէն մէկ քանին չանցիմ ուղղել  
սխնականներուն ներքեւ դրուած ու թուագրուած  
ծանօթութիւններով: Ծ.Խ.

